



**ՄԱԱԶԿ-ը, ԵՄ պատվիրակությունը և ՀՀ համապատասխան կառույցները նշեցին
Չափագիտության համաշխարհային օրը**

Երևան, 27 մայիսի, 2025 թ. – Մայիսի 27-ին Հայաստանի Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը (ԱՐՄՍՏԱՆՂԱՐՏ), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) և Եվրոպական միության պատվիրակությունը նշեցին Չափագիտության համաշխարհային օրը, որի այս տարվա կարգախոսն է՝ «Չափումներ բոլոր ժամանակների և բոլոր մարդկանց համար»:

Կարգախոսը հիշեցում է չափագիտության կայուն և համընդհանուր դերի մասին: Ճշգրիտ չափումները հանդիսանում են գիտական բացահայտումների, արդար առևտրի, սպառողների անվտանգության և կայուն զարգացման հիմնասյունը բազմաթիվ ոլորտներում՝ լաբորատորիաներում՝ օգտագործվող գործիքներից մինչև առօրյայում օգտագործվող ապրանքներն ու ծառայությունները:



Չափագիտության համաշխարհային օրը նշվում է **Մետրական կոնվենցիայի** ստորագրման օրվանից՝ 1875 թվականի մայիսի 20-ից, ինչը հիմք դրեց **Միջազգային միավորների համակարգի (SI)** և միջազգային համագործակցությանը չափումների գիտության ոլորտում: Այս տարվա միջոցառումն առանձնահատուկ նշանակություն ուներ Հայաստանի համար, քանի որ միջոցառմանը ներկա էին միջազգային չափագիտական կազմակերպությունների՝ **Միջազգային քաշերի և չափերի բյուրոյի (BIPM)** և **Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (OIML)** ղեկավարները:

Միջոցառումը անցավ **ԱՐՄՍՏԱՆՂԱՐՏ-ի** շենքում և միավորեց պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, միջազգային գործընկերների, գիտական ու կրթական հաստատությունների, մասնավոր հատվածի և որակի ենթակառուցվածքի ոլորտի այլ շահառուների՝ ընդգծելու չափագիտության առանցքային դերը ժամանակակից աշխարհի տարբեր ոլորտներում:

Հայաստանը ներկայումս առաջ է շարժվում ինչպես **BIPM-ի**, այնպես էլ **OIML-ի** անդամակցության ուղղությամբ, ինչը կարևոր քայլ է միջազգային չափագիտական համակարգում ինտեգրվելու համար: Միջոցառումն ապահովեց երկխոսության և համագործակցության հարթակ շահագրգիռ կողմերի՝ այդ թվում **ԱՐՄՍՏԱՆՂԱՐՏ-ի** ներկայիս և պտտենցիալ հաճախորդների, բուհերի և որակի ենթակառուցվածքի այլ մարմինների միջև:

«Այս մշտական իմաստությունը մեզ հիշեցնում է, որ չափագիտությունը՝ չափումների գիտությունը, հիմնարար նշանակություն ունի», – իր ողջույնի խոսքում նշեց **Ֆրանկ Հեսսը**, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար:



Միջոցառման ընթացքում **ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը** նշեց, որ երկրի չափագիտական ենթակառուցվածքները շարունակաբար հզորանում են՝ ապահովելով տեղական և միջազգային շուկաները մրցունակ ծառայություններով:

ՄԱԱԶԿ-ի գլխավոր տնօրենի հատուկ ներկայացուցիչը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում **Ջոզեֆ Կառլ Պելիկանը** կարևորեց ԵՄ/ՄԱԱԶԿ «Աջակցություն

Հայաստանում որակի ենթակառուցվածքին» ծրագրի միջոցով Հայաստանում իրականացվող աշխատանքը,

մասնավորապես 4 տրամաչափարկան լաբորատորիաների ստեղծումը, ինչը ԵՄ-ի և ՄԱԱԶԿ-ի միջև շարունակական գործընկերության նշանակալի ձեռքբերում է:

Միջազգային չափագիտական կազմակերպությունների ղեկավարները ևս մեկ անգամ ընդգծեցին ճշգրիտ չափումների կարևոր նշանակությունը: Ինչպես նշեց **BIPM-ի տնօրեն դոկտոր Մարտին Ջ. Թ. Միլթոնը**, չափագիտության հիմնական նպատակ է ապահովել բոլորին հավասարապես հասանելի, ճշգրիտ և վստահելի չափումները: **OIML-ի փոխտնօրեն Յան Դանսիլը** հավելեց՝ Հայաստանը վճռական քայլերով ձգտում է դառնալ միջազգային չափագիտական հանրության մաս:



Մասնակիցները կիսվեցին իրենց փորձով՝ անդրադառնալով տեխնոլոգիական նոր լուծումներին, գլոբալ համադրման ուղղությամբ կատարվող աշխատանքներին, ինչպես նաև չափագիտական կարողությունների ամրապնդման

ռազմավարություններին զարգացող երկրներում: **ԱՐՄՄՍԱՆԴԱՐՏ**-ը ներկայացրեց իր վերջին ձեռքբերումները, կարողությունների զարգացման ընթացիկ աշխատանքները և միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, որոնք միտված են Հայաստանում ժամանակակից, կայուն և միջազգային չափանիշներին համապատասխան որակի ենթակառուցվածքի զարգացմանը:

Միջոցառման ընթացքում ներկայացված հիմնական ուղերձներից էին՝ **Մետրական կոնվենցիայի 150-ամյակի միջոցառումը՝ «Չափումներ բոլոր ժամանակների, բոլոր մարդկանց համար»**, **OIML-ի 70-ամյակը և համաշխարհային չափագիտության ապագան**, **ՄԱԱԶԿ-ի աջակցությունը բոլորին ճշգրիտ չափումների ապահովման գործում**:



Չափագիտության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումից հետո կազմակերպվեց շրջայց, որի ընթացքում մասնակիցները ծանոթացան լաբորատորիաների կողմից մատուցվող բազմաբնույթ տրամաչափարկման և չափման ծառայություններին, որն օգնեց այցելուներին ավելի լավ պատկերացնել չափագիտության կենսական դերը արտադրանքի որակի ապահովման, նորմատիվ պահանջներին համապատասխանության և միջազգային շուկայում մրցունակության պահպանման գործում:

Միջոցառումը ևս մեկ անգամ ընդգծեց Հայաստանի կայուն առաջընթացը՝ դեպի միջազգային չափագիտական և որակի ենթակառուցվածքների համակարգերի խոր ինտեգրում, ինչը վկայում է չափագիտության առաջ մղմանն ուղղված հանձնառության մասին՝ որպես նորարարության, տնտեսական զարգացման և միջազգային ճանաչման խթան: Մա համահունչ է Հայաստանի ստանձնած ռազմավարական պարտավորություններին սահմանված Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA), ինչպես նաև՝ Դիմակայունության և աճի ծրագրում ներկայացված առաջնահերթություններին, ինչպիսիք են առևտրի դիվերսիֆիկացումը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել՝
Օրագրի ղեկավար Ցոնգ Վուին՝ C.WU@unido.org
Ազգային ծրագրերի համակարգող Մանե Թափալցյանին՝ m.tapaltsyan@unido.org